*ւորաց եւ ամենայն քրիստոնէից: Եւ լալով գոռալով մեկնեցաք ի սուրբ գերեզմանէն՝ որպէս գառն ի մաքեաց: Եւ զկնի մեր մտանէին այլք, դաս դաս: Եւ մատուռն փոքր էր, տասն հոգի հազիւ մէկնէր:*

ԳՈՂԳՈԹԱ, ԳԵԹՍԵՄԱՆԻ

*Եւ անտի ելաք ի Գողգոթայ լեառն, որ է ԺԵ աստիճան. եւ հուպ նմին Վերնատունն մեր, ուր մեր խորան եւ սեղանն է: Եւ ամենայն անօրինականացն երկրպագեալ դարձաք ի տուն:*

*Եւ այլ օր տարան զմեզ ի Գէթսամանի, ուր Գերեզման է սուրբ Աստուածածնին: Եւ է ինքն մեծ եւ փառաւոր եկեղեցի՝ քաղքէն ի դուրս, մէջ ձորու, զոր քառասուն աստիճան վար իջաք՝ «Այսօր ժողովեալ» ասելով մտաք ի ներս. քանզի եւ Տիրամօրն գերեզմանին վրայ մէջ եկեղեցոյ մատուռ մ'էր շինած զմպէթաձեւ. եւ անդր ջերմ եւ երկար աղօթեալ՝ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ ամենայն երախտաւորաց: Եւ յետոյն տեսաք մաղարայ մի խաւարչտին եւ խոր. եւ ասին թէ ա՛ստ է Դժոխոց բերանն: Եւ ելեալ ի գլուխ աստիճանաց՝ էր Գերեզման Ծնողաց ամէնօրհնեալ Սուրբ Աստուածածնին. եւ բազում ուխտատեղեաց հանդիպեալ, զոր կայ մի ըստ միոջէ գրած ի Տնօրինականքն. յաջ կողմն Յովակիմ էր եւ ի ձախն՝ Աննայ:*

126 *ի* չիf: — 140 *եկեղեցո*: — 149 *կա*: